**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"26" նոյեմբերի 2025թ. N 3243-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 27 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 27 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

**ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

11/26/2025

X

ԱՍԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN ASATUR 2308910957

**Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » ____________ 2025թ.
N __________ հրամանի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 27

## Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

18.11.2025թ.

ք. Երևան

2025թ. նոյեմբերի 18-ին ժամը 12:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Կ. Մկրտչյանը

***<u>Օրակարգում՝</u>***

1. «Երկու Ընկեր» ՍՊ ընկերության «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու մասին գրությունը,

2. «Մարինե Պողոսյան» ՍՊ ընկերության «Գուգարք Վանաձոր» թիվ 05-026 և «Վանաձոր-Շահումյան» թիվ 05-013 ներմարզային երթուղիների անավտոտրսպորտային միջոցները նորով փոխարինելու մասին գրությունը,

3. «Գա-Լի» ՍՊ ընկերության «Դարբնիկ-Երևան» թիվ 473 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը նորով փոխարինելու մասին գրությունը,

4. «Մրքածոր» ՍՊ ընկերության «Երևան-Գորիս» թիվ 607 և «Քաջարան-Երևան» թիվ 617 միջմարզային երթուղիների սպասարկման իրավունքից հրաժարվելու մասին գրությունը:

***Քննարկվեց՝***

1. «Երկու Ընկեր» ՍՊ ընկերության «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու հարցը,

2. «Մարինե Պողոսյան» ՍՊ ընկերության «Գուգարք Վանաձոր» թիվ 05-026 և «Վանաձոր-Շահումյան» թիվ 05-013 ներմարզային երթուղիների անավտոտրսպորտային միջոցները նորով փոխարինելու հարցը,

3. «Գա-Լի» ՍՊ ընկերության «Դարբնիկ-Երևան» թիվ 473 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը նորով փոխարինելու հարցը,

4. «Մրքածոր» ՍՊ ընկերության «Երևան-Գորիս» թիվ 607 և «Քաջարան-Երևան» թիվ 617 միջմարզային երթուղիների սպասարկման իրավունքից հրաժարվելու հարցը:

***Որոշվեց՝***

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներով (այսուհետ Կարգ)՝

1. Թույլատրել «Երկու Ընկեր» ՍՊ ընկերությանը «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղին համալրել «Հյունդայի» մակնիշի 682 HI 61 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով,

2. Թույլատրել «Մարինե Պողոսյան» ՍՊ ընկերությանը «Գուգարք Վանաձոր» թիվ 05-026 ներմարզային երթուղում շահագործվող «Գազ 32212» մակնիշի 35 VA 834 (0507L) և «Գազ 32212» մակնիշի 37 GF 834 (0622L), հաշվառման համարանիշների ավտոտրանսպորտային միջոցները փոխարինել «Գազ Լուիդոր» մակնիշի 37 LI 662 և «Գազ 32212-264» 37 RV 215 հաշվառման համարանիշների ավտոտրանսպորտային միջոցներով,

2.1 Չթույլատրել «Մարինե Պողոսյան» ՍՊ ընկերությանը «Վանաձոր-Շահումյան» թիվ 05-013 ներմարզային երթուղում շահագործվող «Գազ 322123» մակնիշի 36 FA 699 (0544L) ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Գազ Լուիդոր 225000» 37 LI 664 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով՝ համաձայն Կարգի 44-րդ կետի,

3. Թույլատրել «Գա-Լի» ՍՊ ընկերությանը «Դարբնիկ-Երևան» թիվ 473 միջմարզային երթուղում շահագործվող «Գազ 32213» մակնիշի (3425L) հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Գազ Լուիդոր 225000» մակնիշի 37 LI 952 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով,

4. Դադարեցնել «Մրքաձոր» ՍՊ ընկերության «Երևան-Գորիս» թիվ 607 և «Քաջարան-Երևան» թիվ 617 միջմարզային երթուղիների սպասարկման իրավունքը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան